Մորմոնի Գիրքը՝ մեր կրոնի պորտաքարը

«Քրիստոսի մասին մեր վկայության պորտաքարը»

«Մորմոնի Գիրքը Հիսուս Քրիստոսի մասին մեր վկայության պորտաքարն է, իսկ Նա այն ամենի պորտաքարն է, ինչ մենք անում ենք: Այն բերում է վկայություն Նրա իրական լինելու մասին: . . . Վարդապետի վերաբերյալ գրքի վկայությունը «մաքուր է, չխեղաթյուրված և լի զորությամբ: . . . Քրիստոնյա աշխարհի մեծ մասն այսօր հերքում է Փրկչի աստվածայնությունը: Նրանք հարցականի տակ են դնում Նրա զարմանահրաշ ծնունդը, Նրա կատարյալ կյանքը և Նրա փառահեղ հարության իսկությունը: Մորմոնի Գիրքը պարզ և անսխալ ձևով է ուսուցանում այդ ամենի մասին: Այն նաև ներկայացնում է Քավության վարդապետության ամենալիարժեք բացատրությունը» (Ezra Taft Benson, "The Book of Mormon—Keystone of Our Religion," *Ensign,* Nov. 1986, 5):

Մորմոնի Գիրքը՝ մեր կրոնի պորտաքարը

«Մեր վարդապետության պորտաքարը»

«Մորմոնի Գրքում կարող ենք գտնել այն վարդապետությունների ամբողջականությունը, որոնք անհրաժեշտ են մեր փրկության համար: Եվ դրանք ուսուցանվում են պարզ և հասարակ ձևով, որ-պեսզի անգամ երեխաները կարողանան սովորել փրկության և վեհացման ուղիները: Մորմոնի Գիրքն այնքան շատ բան է առաջարկում, որ մեծացնում է փրկության վարդապետությունների վերաբերյալ մեր հասկացողությունը: Առանց Մորմոնի Գրքի՝ այլ սուրբ գրություններում ուսուցանվածի մեծ մասը չի լինի այդքան պարզ ու արժեքավոր» (Ezra Taft Benson, "The Book of Mormon—Keystone of Our Religion," *Ensign,* Nov. 1986, 6):

Մորմոնի Գիրքը՝ մեր կրոնի պորտաքարը

«Վկայության պորտաքարը»

«Մորմոնի Գիրքը վկայության պորտաքարն է: Ճիշտ այնպես, ինչպես կամարը փլվում է, եթե պորտա-քարը հեռացվում է, այդպես էլ ամբողջ Եկեղեցին կանգուն է մնում կամ կործանվում է՝ ելնելով Մորմոնի Գրքի ճշմարտացիությունից: . . . Եթե Մորմոնի Գիրքը ճշմարիտ է . . . ապա մարդը պետք է ընդունի Վերականգնման և դրա հետ կապված բոլոր պահանջները» (Ezra Taft Benson, "The Book of Mormon—Keystone of Our Religion," *Ensign,* Nov. 1986, 6):

© 2015 BY INTELLECTUAL RESERVE, INC. ԲՈԼՈՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐՊԱՀՊԱՆՎԱԾ ԵՆ: